

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի 2020 թվականի

Հաշվետու տարում ներքին աուդիտի համակարգ ներդրած Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի թվով 223 մարմիններից 95-ում իրականացվել է ներքին աուդիտ և «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համապատասխան հաշվետվություններ են ներկայացվել լիազոր մարմին (տե՛ս Ցանկ N 1 և Ցանկ N 2):

2020 թվականին «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթը (այն է՝ ներքին աուդիտն իրականացնում են կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման կամ հրավիրված անձինք) գործնականում ապահովելու նպատակով լիազոր մարմնի կողմից մշակվել և պետական մարմինների ու մասնագիտական կազմակերպությունների քննարկման է ներկայացվել Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվելիք գնման գործընթացների գնման հայտում ներառվող բնութագրին ներկայացվող պահանջների նախագիծը, որի արդյունքներով 2020 թվականի հուլիսի 15-ին ընդունվել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման համար գնման հայտում ներառվող բնութագրին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 204-Լ հրամանը:

Դրանով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին հնարավորություն ընձեռվեց ներքին աուդիտի աշխատանքների իրականացումը ներքին աուդիտի ստորաբաժանման փոխարեն արտապատվիրակել աուդիտի բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան փորձառություն ունեցող կազմակերպությունների:

Արդյունքում ներքին աուդիտ իրականացրած թվով 95 պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից թվով 55-ը ներքին աուդիտի աշխատանքների իրականացումը արտապատվիրակել են հրավիրված անձանց:

Հաշվետու ժամանակաշրջանում թվով 50 պետական մարմիններից (այսուհետ՝ ՊՄ) ներքին աուդիտի ստորաբաժանումներ առկա են թվով 19-ում: Պետական մարմիններից ներքին աուդիտ իրականացվել է թվով 29-ում (տե՛ս Ցանկ N 1), որից թվով 15-ում ներքին աուդիտն իրականացվել է ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից, ևս թվով 14 մարմիններում ներքին աուդիտն իրականացվել է մասնավոր կազմակերպությունների կողմից՝ ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման միջոցով: Թվով 21 ՊՄ-ում աուդիտ չի իրականացվել, ինչը դրանցից թվով 18-ի պարագայում պայմանավորված է ներքին աուդիտի ստորաբաժանումների լուծարված լինելու հանգամանքով, իսկ թվով 3-ում հաստիքները համալրված չեն եղել:

Ներքին աուդիտի իրականացման վերաբերյալ թվով 66 տեղական ինքնակառավարման մարմինների կողմից (այսուհետ՝ ՏԻՄ) լիազոր մարմին ներկայացված հաշվետվությունների համաձայն 23 քաղաքներից 19-ում ներքին աուդիտն իրականացվել է ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով, իսկ 4 քաղաքներում այն իրականացվել է մասնավոր կազմակերպության կողմից (տե՛ս Ցանկ N 2), իսկ թվով 43 գյուղերից թվով 41-ում ներքին աուդիտի աշխատանքներն իրականացվել են հրավիրված անձանց միջոցով:

Ներքին աուդիտի համակարգի գործունեության բարելավման շրջանակներում 2020 թվականի ընթացքում բացի հանրային հատվածի ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվելիք գնման գործընթացների գնման հայտում ներառվող բնութագրին ներկայացվող պահանջների վերաբերյալ վերոհիշյալ հրամանի մշակման ուղղությամբ իրականացված աշխատանքներից, որպես լիազոր մարմին ապահովել է վերոհիշյալ գործընթացի հետ կապված շահագրգիռ մարմիններին պարզաբանումների տրամադրումը և աջակցությունը, ինչպես նաև աշխատաքներ են տարվել ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 1716-Լ որոշմամբ հաստատված «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությունը և պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականներին իրականացվելիք գործողությունների ծրագրում» սահմանված թիրախների առանձին միջոցառումների գծով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք էջում հրապարակվել են «ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված հանրային

հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերը» և «Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված ինչպես նաև այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերը» (այսուհետ՝ Ցանկեր): Այդ Ցանկերում ներառված տվյալների համաձայն 2020 թվականի տարեսկզբին Ցանկերում ընդգրկված թվով 361 աուդիտորներից թվով 220-ը հանդիսացել են հանրային հատվածի կազմակերպությունների աշխատողներ, իսկ 2020 թվականի ավարտին՝ թվով 275 աուդիտորներից միայն թվով 101-ը:

Հիմք ընդունելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը և առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի օգոստոսի 21-ի «Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման կարգը հաստատելու մասին» N 541-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով՝ 2020 թվականին իրականացվել է տարեսկզբին Ցանկերում ընդգրկված 361 ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպումը, որի նպատակով նախատեսվել է նախ՝

1. լրացուցիչ 8 թեմաներ՝ բոլոր որակավորված, այդ թվում՝ ստորաբաժանման ղեկավարի պարտականություններ իրականացնող ներքին աուդիտորների համար՝ ըստ հայեցողության,

2. պարտադիր 14 թեմաներ, որից 8-ը չկրկնվող՝ ինչպես ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի պարտականությունները կատարող ներքին աուդիտորների, այնպես էլ բոլոր որակավորված ներքին աուդիտորների համար՝ առանձին-առանձին:

2020 թվականին կազմակերպվել են թվով 21 շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, որից ընտրված լրացուցիչ թեմաների համար թվով 11, իսկ պարտադիր թեմաների համար՝ 10 դասընթացներ: 2020 թվականին կազմակերպված շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին մասնակցել են թվով 242 որակավորված ներքին աուդիտորներ, ընդ որում թվով 42-ը՝ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի պարտականությունները կատարողներ: Շարունակական մասնագիտական վերապատրաստում անցած թվով 242 աուդիտորներից թվով 101-ը հանրային հատվածի աշխատողներ են, այդ թվում 63-ը՝ ՊՄ-ի, 39-ը՝ ՏԻՄ-ի և 54-ը կազմակերպությունների աշխատողներ, 87-ը՝ ֆիզիկական անձինք: Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին մասնակցած աուդիտորների թվաքանակը 2019 թվականի համեմատությամբ ավելացել է 16-ով կամ 7.3 %-ով, իսկ 2018 թվականի համեմատությամբ ավելացել է 2-ով կամ 0.8 %-ով:

Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացին չեն մասնակցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբում Ցանկերում ընդգրկված թվով 119 աուդիտորներ, որից թվով 97 աուդիտորներ վերապատրաստման դասընթացին մասնակցության հայտ չներկայացնելու, թվով 5-ը դասընթացին չմասնակցելու և թվով 1-ը ժամանակավոր անաշխատունակության պատճառով: Նշված ցուցանիշը 2018-2019 թվականների համեմատությամբ գրանցել է բացասական շարժ` 2019 թվականի համեմատ ավելանալով 50-ով կամ 106%-ով, իսկ 2018 թվականին` 23-ով կամ 31%-ով, ինչը պայմանավորված է հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության դադարեցման և դրա արդյունքում ներքին աուդիտորների կողմից այլ աշխատանքի անցնելու հանգամանքով:

Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների արդյունքներով կազմակերպվել և անց է կացվել թեստավորում, որի արդյունքներով թեստավորման ենթակա 264 ներքին աուդիտորներից թեստավորվել են 242-ը, 22-ը չեն ներկայացել թեստավորմանը: Թեստավորմանը մասնակցած թվով 242 աուդիտորներից թվով 9-ը թեստավորվել են ՀՀ ֆինանսների նախարարի 21.08.2014թ. N 541-Ն հրամանով հաստատված կարգի 32-րդ կետի համաձայն, իսկ 5-ը ՀՀ ֆինանսների նախարարի 21.08.2014 թվականի N 541-Ն հրամանով հաստատված կարգի 18-րդ կետի պահանջներին համապատասխան թեստավորվել են 2021 թվականին:

Շարունակական մասնագիտական վերապատրաստման թեստավորման փուլին մասնակցած թվով 242 աուդիտորներից թվով 100 աուդիտորներ հանրային հատվածի աշխատողներ են, այդ թվում` 61-ը ՊՄ-ի, 39-ը ՏԻՄ-ի, իսկ թվով 142-ը (87-ը ֆիզիկական անձ, 55-ը մասնավոր կազմակերպության աշխատակից)` չեն հանդիսանում հանրային հատվածի կազմակերպությունների գործող աուդիտորներ:

Շարունակական մասնագիտական վերապատրաստման թեստավորմանը մասնակցած աուդիտորների թվաքանակը 2019 թվականի համեմատությամբ ավելացել է 21-ով կամ 9.5%-ով, իսկ 2018 թվականի համեմատությամբ ավելացել է 13-ով կամ 5.6 %-ով:


Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացի թեստավորմանը մասնակցած թվով 242 աուդիտորներից թվով 235-ը հաղթահարել են թեստավորման նվազագույն շեմը, իսկ ՊՄ-ի թվով 7 աուդիտորներ չեն հաղթահարել սահմանված նվազագույն շեմը: Թեստավորման նվազագույն շեմը չհաղթահարած աուդիտորների քանակը 2019 թվականի համեմատությամբ ավելացել է 5-ով, իսկ 2018 թվականի համեմատությամբ` 6-ով:

Շարունակական մասնագիտական վերապատրաստում չանցած կամ թեստավորմանը չմասնակցած կամ թեստավորման նվազագույն շեմը չհաղթահարած աուդիտորների որակավորումը դադարեցվել է և նրանց անունները հանվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց Ցանկերից:

Այսպիսով, 2020 թվականի ընթացքում հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորումը կորցրել են Ցանկերում ընդգրկված թվով 122 աուդիտորներ, որից թվով 93-ը շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացին չմասնակցելու, թվով 23-ը թեստին չներկայանալու և թվով 7-ը թեստավորման նվազագույն շեմը չհաղթահարելու հետևանքով: Նշված ցուցանիշը 2018-2019 թվականների համեմատությամբ բացասական միտում ունի, 2019 թվականի համեմատ ավելանալով 73-ով կամ 148 %-ով, իսկ 2017 թվականի համեմատ 44-ով կամ 56.4 %-ով:

Ստորև գծապատկերում ներկայացված են կազմակերպված շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին, թեստավորմանը մասնակցած, ինչպես նաև ներքին աուդիտորի որակավորումը կորցրած աուդիտորների 2018-2020 թվականների համեմատական ամփոփ ցուցանիշները:

**Շարունակական մասնագիտական
վերապատրաստման դասընթացներին և
թեստավորմանը մասնակցած, որակավորումը
կորցրած աուդիտորների թվաքանակը**



«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված ներքին աուդիտորի որակավորման կարգի համաձայն՝ 2020 թվականի ընթացքում կազմակերպվել է թվով 2 որակավորման քննություն: Որակավորման քննություններին, ներառյալ վերաորակավորվելու համար, հայտ են ներկայացրել թվով 11 դիմորդներ: Նշված ցուցանիշը 2019 թվականի համեմատությամբ պակասել է 87-ով կամ 88.7%-ով, սակայն 2018 թվականի համեմատությամբ նվազել է՝ 123-ով կամ 91.7%-ով: Որակավորման քննություններին մասնակցության ցածր տեմպը պայմանավորված է COVID-19 կորոնավիրուսի հիվանդության տարածման հետևանքով լիազոր մարմնի կողմից որակավորման քննությունների միայն 2020 թվականի 4-րդ եռամսյակում կազմակերպման հանգամանքով:

Քննությանը մասնակցելու համար հրավիրված թվով 11 դիմորդներից ներկայացել են թվով 9 դիմորդներ: Որակավորման համար սահմանված շեմը հաղթահարել են թվով 7 դիմորդներ և նրանց շնորհվել է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում և


ներառվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող՝ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում:

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում, ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 2-րդ գլխի 5-րդ և 6-րդ կետերի պահանջներին համապատասխան «Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված ինչպես նաև այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերում» ընդգրկվելու նպատակով, 2020 թվականի ընթացքում ստացվել է 33 դիմում և բոլորն էլ բավարարվել են, նրանց շնորհվել է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում և նրանք համապատասխանաբար ընդգրկվել են Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված ինչպես նաև այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերում:

Նշված ցուցանիշը 2019 թվականի համեմատությամբ նվազել է 49-ով, իսկ 2018 թվականի համեմատությամբ ավելացել 28-ով:


Այսպիսով, համադրելով ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց Ցանկերում ընդգրկվածության վերաբերյալ վերը նշված դինամիկայի վերլուծության արդյունքները, ստացվում է, որ 2020 թվականի տարեվերջի դրությամբ առկա է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող Ցանկերում ընդգրկված թվով 275 աուդիտոր, որը նախորդ 2019թ. համեմատությամբ նվազել է համապատասխանաբար 86-ով կամ 23%-ով և 2018թ. համեմատությամբ ավելացել 2-ով կամ 0,7%-ով:

Ստորև գծապատկերում բերված են հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող և Ցանկերում ընդգրկվածության 2018-2020 թվականների ամփոփ ցուցանիշները:



Հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումներում ներգրավված աուդիտորների վերաբերյալ 2018-2020 թվականների համապատասխան ցուցանիշների դինամիկան արտացոլված է ստորև ներկայացված գծապատկերում.


Հանրային հատվածի կազմակերպություններում աշխատող ներքին աուդիտորների թվաքանակը



2020 թվականին 2018-2019 թվականների համեմատությամբ փոփոխության է ենթարկվել նաև հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումներում ներգրավված որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակը: Այսպես՝ 2020 թվականին գործող որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը 2019 թվականի համեմատությամբ պակասել է 129-ով կամ 58.9%-ով, իսկ ուսուցանվող աուդիտորների թվաքանակը պակասել է՝ 19-ով կամ 41.3%-ով, մինչդեռ 2018 թվականի համեմատությամբ՝ գործող որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը պակասել է 148-ով կամ 68.1%-ով, իսկ ուսուցանվող աուդիտորների թվաքանակը՝ 25-ով կամ 48%-ով:


ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի աշխատանքներում ընդգրկված որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ 2018-2020 թվականների, ունի հետևյալ պատկերը:

Որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակի հարաբերակցությունը



ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտի ստորաբաժանումների համալրված թվով 117 աուդիտորներից, թվով 82-ը հանդիսանում են ՊՄ, իսկ թվով 35-ը՝ ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների աշխատողներ: 2020 թվականին 2019 թվականի համեմատությամբ ՊՄ աուդիտորների թիվը պակասել է 116-ով կամ 58.5%-ով, իսկ ՏԻՄ աուդիտորների թվաքանակը պակասել է 32-ով կամ 47.7%-ով, իսկ 2018 թվականի համեմատությամբ՝ ՊՄ աուդիտորների թվաքանակը պակասել է 143-ով կամ 63.5%-ով, իսկ ՏԻՄ աուդիտորների թվաքանակը պակասել է 30-ով կամ 46.1 %-ով:


ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտորների թվաքանակը



2020 թվականին փոփոխություն է արձանագրվել նաև ՊՄ և ՏԻՄ որակավորված և ուսուցանվող աուդիտորների քանակական հարաբերակցության մեջ: 2020 թվականի հաշվետու տարում ՊՄ որակավորված աուդիտորների թվաքանակը 2019 թվականի համեմատությամբ պակասել է 136-ով կամ 68.6%-ով, իսկ 2018 թվականի համեմատությամբ՝ 163-ով կամ 72.4%-ով, ուսուցանվող աուդիտորների թվաքանակը 2019 թվականի համեմատությամբ պակասել է 11-ով կամ 35.4%-ով, իսկ 2017 թվականի համեմատությամբ ավելացել՝ 14-ով կամ 41.1%-ով:

ՊՄ որակավորված և ուսուցանվող աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ 2018-2020 թվականների, ունի հետևյալ պատկերը.


Որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների հարաբերակցությունը ՊՄ-ներում



2020 թվականի հաշվետու տարում 2018-2020 թվականների համեմատությամբ պակասել է ՏԻՄ որակավորված աուդիտորների թվաքանակը՝ համապատասխանաբար 2019 թվականի համեմատությամբ՝ 28-ով կամ 46%-ով, իսկ 2018 թվականի համեմատությամբ՝ 19-ով կամ 40.4%-ով, սակայն ուսուցանվող աուդիտորների թվաքանակը պակասել է 2019 թվականի համեմատությամբ՝ 8-ով կամ 53.3%-ով, իսկ 2018 թվականի համեմատությամբ՝ 11-ով կամ 61%-ով:

ՏԻՄ որակավորված և ուսուցանվող աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ 2018-2020 թվականների, ունի հետևյալ պատկերը.

Որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների հարաբերակցությունը ՏԻՄ-ներում



2020 թվականի հաշվետու տարում «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում, ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան «Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում» ընդգրկվելու նպատակով ներքին և (կամ) արտաքին աուդիտի գործունեությամբ զբաղվող կազմակերպություններից ստացվել է 4 հայտ, որոնք բավարարվել են և այդ կազմակերպությունները ընդգրկվել են «Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում», տարեսկզբի 15 կազմակերպությունից՝ 2020 թվականի տարեվերջին հասնելով 19 կազմակերպության:

ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջները խախտելու պատճառով 5 կազմակերպություն դուրս են մնացել հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկից:

Այսպիսով 2020 թվականի տարեվերջին «Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում» ընդգրկված կազմակերպությունների թիվը 14 է: Նշված ցուցանիշը 2019 թվականի

համեմատությամբ նվազել է 1-ով, իսկ 2018 թվականի համեմատությամբ ավելացել 10-ով:

2020 թվականի հաշվետու տարվա ավարտին՝ կազմակերպության կառուցվածքում գործող ՀՀ հանրային հատվածի ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով իրականացված և ներքին աուդիտի աշխատանքների վերաբերյալ ստացված տարեկան ամփոփ հաշվետվությունների, ինչպես նաև հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 3-րդ՝ «Ներքին աուդիտի միջավայրի միավորները» աղյուսակի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2020 թվականի ընթացքում պլանավորվել է աուդիտի ենթարկել ՊՄ և ՏԻՄ 2399 միավորներից 558 միավորը կամ 23%-ը և 11417 գործառույթից 3298 գործառույթը կամ 28.8%-ը, համապատասխանաբար 2019 թվականին 4668 միավորներից 1495 միավորը կամ 32.0%-ը և 21575 գործառույթից 8054 գործառույթը կամ 39.4%-ը, իսկ 2018 թվականին 4870 միավորներից՝ 1422-ը կամ 29.2%-ը և 22502 գործառույթից՝ 8074-ը կամ 35.9%-ը: Նշված ցուցանիշը 2019 թվականի համեմատությամբ նվազել է՝ ըստ միավորների 2269-ով կամ 48.6%-ով և ըստ գործառույթի՝ 10158-ով կամ 47%-ով, իսկ 2018 թվականի համեմատությամբ նվազել է, համապատասխանաբար՝ 2471-ով կամ 51%-ով և 11085-ով կամ 49%-ով: 2020 թվականին փաստացի աուդիտի է ենթարկվել ՊՄ և ՏԻՄ 489 միավոր և 2693 գործառույթ կամ աուդիտի միջավայրի 20.3%-ը: Նշված ցուցանիշը, 2019 թվականի համեմատությամբ ըստ միավորների նվազել է 907-ով կամ 60% և ըստ գործառույթի 4756-ով կամ 59%, իսկ 2018 թվականի համեմատությամբ ըստ միավորների նվազել է 834-ով կամ 58.6%-ով և նվազել ըստ գործառույթի 4776-ով կամ 59%:

Նշված ցուցանիշները ըստ ՊՄ և ՏԻՄ ստորաբաժանումների կողմից ներկայացրած տվյալների կազմում են. 2020 թվականի հաշվետու տարում ՊՄ-ի 1234 միավորներից պլանավորվել է աուդիտի ենթարկել 267-ը կամ միավորների 21.6%-ը և 6506 գործառույթից՝ 1749-ը կամ 26.8%-ը, 2019 թվականին 3340 միավորներից պլանավորվել է աուդիտի ենթարկել 1159-ը կամ միավորների 34.7%-ը և 17331 գործառույթից՝ 7054-ը կամ 40.7%-ը, 2018 թվականի համապատասխանաբար ըստ միավորների 28.9% կամ 3435 միավորներից՝ 993-ը, ըստ գործառույթի՝ 36.3% կամ 17674 գործառույթից 6411-ը:

2020 թվականին փաստացի աուդիտի է ենթարկվել ՊՄ 269 միավոր կամ միավորների 21.7% և 1493 գործառույթ կամ 22.9 %, 2019 թվականին փաստացի աուդիտի է ենթարկվել ՊՄ 1140 միավոր կամ միավորների 34.1% և 5380 գործառույթ կամ 31.0 %, 2018 թվականին ըստ միավորների 27.9% կամ 960 միավոր, ըստ գործառույթի 33.0% կամ 5837 գործառույթ:

Միննույն ժամանակ նշված ցուցանիշները համաձայն ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումներից ստացված տվյալների՝ 2020 թվականին հաշվետու տարում 1165

միավորներից պլանավորվել է աուդիտի ենթարկել 291 միավորներ կամ միավորների 24.9% և 4911 գործառույթից՝ 1504 գործառույթ կամ 30.6%, 2019 թվականին հաշվետու տարում 1328 միավորներից պլանավորվել է աուդիտի ենթարկել 336 միավորներ կամ միավորների 25.3% և 4244 գործառույթից՝ 1450 գործառույթ կամ 34.2%, 2018 թվականի համապատասխանաբար ըստ միավորների 29.9% կամ 1435 միավորներից՝ 429-ը, ըստ գործառույթի՝ 34.4% կամ 4828 գործառույթից՝ 1663-ը:

2020 թվականին փաստացի աուդիտի է ենթարկվել ՏԻՄ 220 միավոր կամ միավորների 19% և 1200 գործառույթ կամ 24.4 %, 2019 թվականին փաստացի աուդիտի է ենթարկվել ՏԻՄ 299 միավոր կամ միավորների 22.5% և 1272 գործառույթ կամ 30.0 %, 2018 թվականին ըստ միավորների 26.0% կամ 373 միավոր, ըստ գործառույթի 34.1% կամ 1645 գործառույթ:

Համադրելով այս ցուցանիշները ստացվում է, որ 2020 թվականի ՊՄ և ՏԻՄ փաստացի կատարողականն ըստ միավորների կազմում է 87.6%, իսկ ըստ գործառույթի՝ 81.6%, 2019 թվականի ՊՄ և ՏԻՄ փաստացի կատարողականն ըստ միավորների կազմում է 96.2%, իսկ ըստ գործառույթի՝ 78.2%, 2018 թվականին համապատասխանաբար 93.7% և 92.7%: Նույն ցուցանիշները կազմում են՝ ՊՄ-ների դեպքում ըստ միավորների՝ 2020 թվականին գերակատարվել է 100.7%, 2019 թվականին՝ 98.3%, 2018 թվականին՝ 96.7%, ըստ գործառույթի՝ 2020 թվականին՝ 83.2%, 2019 թվականին՝ 76.3%, 2018 թվականին՝ 91.0%, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ ըստ միավորների՝ 2020 թվականին՝ 75.6%, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ ըստ միավորների՝ 2019 թվականին՝ 89.0%, 2018 թվականին՝ 86.9%, ըստ գործառույթի՝ 2019 թվականին՝ 87.7%, 2018 թվականին՝ 98.9%:

2020 թվականի տարեկան ծրագրով ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումները պլանավորել են իրականացնել 684 առաջադրանք¹, համապատասխանաբար 2019 թվականի 1518 և 2018 թվականի 2680 փոխարեն, որը նախորդ երկու տարիների համեմատությամբ նվազել է՝ ընդ որում 2019 թվականին՝ 834 կամ 54,9%, իսկ 2018 թվականին՝ 1996 կամ 74.4%: Նշված ցուցանիշը ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 2020 թվականին 344 առաջադրանք, 2019 թվականին 1175 առաջադրանք, 2018 թվականին 2249 առաջադրանք, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ 2020 թվականին՝ 340, 2019 թվականին՝ 343, 2018 թվականին՝ 431 առաջադրանքներ:

2020 թվականի տարեկան ծրագրով պլանավորված թվով 684 առաջադրանքից թվով 637-ը պլանավորվել է որպես աուդիտորական, իսկ թվով 44-ը՝ խորհրդատվական ծառայություն մատուցելու առաջադրանքներ, նույն ցուցանիշները համապատասխանաբար

¹Առաջադրանքները, կախված աուդիտի տեսակից, կարող են միաժամանակ ընդգրկել միավորներ և գործառույթներ:

2019 թվականին՝ 1511 և 7 թվով, իսկ 2018 թվականին՝ թվով 2677 և 3: Նշված ցուցանիշը ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 2020 թվականին՝ 339 և 2 առաջադրանք, 2019 թվականին՝ 1172 և 3 առաջադրանք, 2018 թվականին՝ 2248 և 1 առաջադրանք, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ 2020 թվականին՝ 298 և 42, 2019 թվականին՝ 339 և 4, 2018 թվականին՝ 429 և 2 առաջադրանքներ:

Համաձայն տարեկան ամփոփ հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 5-րդ «Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը» աղյուսակով ներկայացված տվյալների՝ փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքների քանակը 2020 թվականին կազմել է 1324 առաջադրանք, համապատասխանաբար 2019 թվականի՝ 1347 և 2018 թվականի՝ 2356 առաջադրանքների փոխարեն, որը ինչպես 2019 թվականի, այնպես էլ 2018 թվականի համեմատությամբ նվազել է՝ համապատասխանաբար 23-ով կամ 1,7%-ով, և 1032-ով կամ 43,8%-ով: Նշված ցուցանիշը 2020 թվականին ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 567, 2019 թվականին՝ 1048, 2018 թվականին՝ 1987 առաջադրանքներ, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ 2020 թվականին՝ 757, 2019 թվականին՝ 299, 2018 թվականին՝ 369 առաջադրանքներ:

Համաձայն N 10 հավելվածի 5-րդ «Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը» աղյուսակով ներկայացված տվյալների ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից 2020 թվականին իրականացվել է լրացուցիչ (ոչ պլանային) թվով 232 աուդիտորական առաջադրանք, 2019 թվականի համեմատությամբ ավելացել է՝ 150 կամ 64,6%, իսկ 2018 թվականի համեմատությամբ՝ 35 կամ 17,7%: 2020 թվականին իրականացված լրացուցիչ թվով 232 աուդիտորական առաջադրանքից թվով 139-ը կամ 59,9%-ը իրականացվել է ՊՄ-ներում, իսկ թվով 93-ը կամ 40,1%-ը՝ ՏԻՄ-ում:

Համադրելով փաստացի, ներառյալ լրացուցիչ, կատարված աուդիտորական առաջադրանքների ցուցանիշները ստացվում է, որ 2020 թվականին գերակատարվել է ընդհանուր ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից 2020 թվականի համար պլանավորված աուդիտորական առաջադրանքները՝ 232-ով կամ 36,4 %-ով, այդ թվում ՊՄ-ներում գերակատարվել է 139-ով կամ 41%-ով, իսկ ՏԻՄ-ում՝ 93-ով կամ 31,2%-ով:

2020 թվականին մատուցվել է լրացուցիչ (ոչ պլանային) թվով 411 խորհրդատվական ծառայություն, համապատասխանաբար 2019 թվականի՝ թվով 149 և 2018 թվականի թվով 83՝ խորհրդատվական ծառայության փոխարեն: Խորհրդատվական ծառայությունները ինչպես 2020 թվականին, այնպես էլ 2019 և 2018 կատարվել են 100%-ով:

Համաձայն 2020 թվականի տարեկան ամփոփ հաշվետվությանը կցված N 10 հավելվածի


4-րդ «Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների» աղյուսակի ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքները ըստ աուդիտի տեսակների՝ ունեն ստորև ներկայացված պատկերը.

2020 թվականի հաշվետու տարում ՊՄ-ում փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքների քանակները 2018-2020 թվականների փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքի քանակների համեմատ կրճատվել են, այսպես՝ համակարգի գնահատման աուդիտի քանակը 2019 թվականի համեմատ կրճատվել է 77,5%-ով, 2018 թվականին 79,8%-ով, համապատասխանաբար կրճատվել է՝ ֆինանսական աուդիտի քանակը՝ 55%-ով և 58,9%-ով, , համապատասխանության կամ իրավական աուդիտի քանակը՝ 49,4%-ով և 53,8%-ով, գնումների աուդիտի քանակը՝ 42,8%-ով և 89,4%-ով, իսկ կատարողականի և տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ չի իրականացվել:

2020 թվականի ընթացքում իրականացված գնումների թվով 112 աուդիտներից՝ 10 կամ 9,2%-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող զին ունեցող, 101-ը կամ 89,9%-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող զին ունեցող և 1-ը կամ 0,9%-ը՝ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնման աուդիտն է:

Ստորև գծապատկերում ներկայացված են ՊՄ փաստացի իրականացրած աուդիտի տեսակների 2018-2020 թվականների ամփոփ ցուցանիշները:

ՊՄ Փաստացի իրականացված աուդիտի տեսակներն՝ ըստ տարիների




2020 թվականի հաշվետու տարում ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից իրականացված աուդիտորական առաջադրանքներում փոփոխությունը ըստ տեսակների ունի հետևյալ պատկերը: Այսպես՝ 2020 թվականին, ինչպես 2019 թվականի, այնպես էլ 2018 թվականի համեմատությամբ աճել են գնումների աուդիտի և կատարողականի աուդիտի քանակները, համապատասխանաբար՝ գնումների աուդիտը՝ 21.1 անգամ և 9.8 անգամ, կատարողականի աուդիտը՝ 190%-ով և 300%-ով, միևնույն ժամանակ համակարգի գնահատման աուդիտի քանակը 2019 թվականին նվազել է 29,3% իսկ 2018 թվականին 24%, ֆինանսական աուդիտի քանակը նվազել է համապատասխանաբար 7,6% և 68,4%, համապատասխանության կամ իրավական աուդիտի քանակը՝ 29,3% և 28,5%:

2020 թվականի ընթացքում իրականացված գնումների թվով 151 աուդիտներից՝ 40-ը կամ 26,5 %-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող, 111-ը կամ 73,5 %-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնման աուդիտն է:

Ստորև գծապատկերում ներկայացված են ՏԻՄ փաստացի իրականացրած աուդիտի տեսակների 2018-2020 թվականների ամփոփ ցուցանիշները:


ՏԻՄ Փաստացի իրականացված աուդիտի տեսակներն՝ ըստ տարիների



2020 թվականին ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ չի իրականացվել:

ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից փաստացի իրականացված ընդամենը աուդիտորական առաջադրանքներն ըստ աուդիտի տեսակների ունի ստորև ներկայացված պատկերը.

ՊՄ և ՏԻՄ Փաստացի իրականացված աուդիտի տեսակներն՝ ըստ տարիների



Համաձայն ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումներից ստացված տարեկան ամփոփ հաշվետվության ուսումնասիրության արդյունքների՝ 2020 թվականին գնման գործընթացի աուդիտ է իրականացվել նաև աուդիտի մնացած տեսակների շրջանակներում՝ ինչպես գնման ընթացակարգերի, այնպես էլ պայմանագրի կատարման մասով, փաստացի ուսումնասիրվել է թվով 1213 գործառույթ, այդ թվում՝ ՊՄ-ներում՝ 915 գործառույթ, իսկ ՏԻՄ-ում՝ 298 գործառույթ, որից գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող՝ 133, այդ թվում՝ ՊՄ-ներում 62, իսկ ՏԻՄ-ում՝ 71, և գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող՝ 1076 գործառույթ, այդ թվում՝ ՊՄ-ներում 849, իսկ ՏԻՄ-ում՝ 227:

2020 թվականին նվազել է ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից արձանագրված անհամապատասխանությունների քանակը, մասնավորապես՝ նախորդ տարվա արձանագրված 6298 անհամապատասխանության փոխարեն, 2020 թվականին արձանագրվել է թվով 2742 անհամապատասխանություն, որից ՊՄ-ներում՝ 1326 և ՏԻՄ-ում՝ 1416՝ ապահովելով 56.5 %-ով կրճատում: Նշված ցուցանիշը 2019 թվականի համեմատությամբ նվազել է՝ ՊՄ-ներում 5430-ով կամ 80.4%, իսկ ՏԻՄ-ում՝ 216-ով կամ

13.2%-ով: 2020 թվականին նվազել է աուդիտորական առաջադրանքների արդյունքներով արձանագրված և իրավապահ մարմիններին փոխանցված անհամապատասխանությունների քանակը՝ հասնելով 57-ի, նախորդ տարվա 152-ի փոխարեն, այդ թվում՝ ՊՄ-ներում 6 դեպք նախորդ տարվա 105-ի փոխարեն, իսկ ՏԻՄ-ում՝ 51 դեպք՝ նախորդ տարվա 47-ի փոխարեն:

2020 թվականի հաշվետու տարվա համար ներքին աուդիտի համակարգ ներդրած և ներքին աուդիտի իրականացման աշխատանքները մասնավոր կազմակերպության պատվիրակած գյուղական համայնքներից, ներքին աուդիտի պատվիրակման և փաստացի կատարված աշխատանքների վերաբերյալ ստացված տեղեկատվության ուսումնասիրությամբ՝ պարզվել է, որ ներքին աուդիտի իրականացման աշխատանքների պատվիրակման գործընթացը նախորդ տարիների համեմատությամբ ավելացել է, ընդ որում՝ 2019 թվականին 9 համայնքով կամ 28.1%-ով, իսկ 2018 թվականի համեմատությամբ նվազել է 27 համայնքով կամ 39.7%-ով: Համաձայն պատվիրակած ներքին աուդիտի իրականացման աշխատանքների վերաբերյալ ստացված, ինչպես տարեկան ամփոփ հաշվետվությունների, այնպես էլ հաշվետվությանը կցված N 10 հավելվածի բաղկացուցիչ աղյուսակների ուսումնասիրության՝ 2020 թվականի հաշվետու տարում, ներքին աուդիտի իրականացման աշխատանքներ պատվիրակած թվով 41 միավորներում պլանավորվել է կատարել թվով 102 առաջադրանքներ, որից 62-ը աուդիտորական առաջադրանք և 40-ը խորհրդատվական ծառայություն՝ ներառելով տարեկան ծրագրով պլանավորված թվով 370 գործառույթները: 2020 թվականին փաստացի իրականացվել է թվով 578 աուդիտորական առաջադրանք, ներառելով 239 աուդիտորական առաջադրանք և 339 խորհրդատվական ծառայություն: Նախատեսված պլանը ինչպես աուդիտորական միավորների և գործառույթների մասով, այնպես էլ աուդիտորական առաջադրանքների և խորհրդատվական ծառայությունների մասով գերակատարվել է: Համաձայն ստացված հաշվետվությունների՝ կատարված 239 աուդիտորական առաջադրանքների գծով իրականացվել է՝ ֆինանսական 1 աուդիտ, կատարողականի 24, համապատասխանության կամ իրավական 21 աուդիտ, համակարգի գնահատման 48 աուդիտ և գնումների 145 աուդիտ:

Համաձայն ստացված տարեկան ամփոփ հաշվետվության ուսումնասիրության արդյունքների, կատարված թվով 239 աուդիտի շրջանակներում իրականացվել է նաև գնման գործընթացի աուդիտ՝ ինչպես գնման ընթացակարգերի, այնպես էլ պայմանագրի կատարման մասով, փաստացի ուսումնասիրելով թվով 298 գործառույթ, այդ թվում՝ գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող՝ 71 և գնումների

բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող՝ 227 գործառույթ:

Համաձայն ներկայացված հաշվետվությունների՝ 41 միավորումներում արձանագրվել է 605 անհամապատասխանությունների քանակ, որից 588 անհամապատասխանություն ընդգրկվել է գործողությունների ծրագրում և կանխվել աուդիտի արդյունքում, իսկ 17 անհամապատասխանություն ուղղման ենթակա չլինելու պատճառով չեն ընդգրկվել գործողությունների ծրագրում:

Ստորև ներկայացվում է ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն², ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված 10-րդ հավելվածով սահմանված ձևաչափի համապատասխան.

**Լիազոր մարմին ներկայացվող տարեկան ամփոփ հաշվետվության այլ բաղկացուցիչ
աղյուսակներ**

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման (ՆԱՍ) ներքին գնահատումներ

N	Նկարագիր	2020թ.	2019թ.	2018թ.
1)	Տվյալ տարվա աուդիտի առաջադրանքների արդյունավետության գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 1-ի	3.0	3.3	3.4
2)	Աուդիտի առաջադրանքների իրականացման որակի վերաբերյալ աուդիտի ենթարկվող միավորների կողմից տրված գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 2-ի	3.2	3.5	3.5

2. Ներքին աուդիտորներ

² Աղյուսակները կազմված են բացառապես ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա, առանձին-առանձին, ստացված ինչպես կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով ներքին աուդիտի իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այնպես էլ ներքին աուդիտի իրականացման աշխատանքները մասնավոր կազմակերպության պատվիրակած մարմիններից և համայնքներից:

N	Նկարագիր	2020թ.	2019թ.	2018թ.
1)	Ներքին աուդիտորների թվաքանակը, այդ թվում՝	203 ³	265	290
1.1)	Որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը	174	219	238
1.2)	Ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակը	29	46	52

3. Ներքին աուդիտի միջավայրի միավորները

N	Նկարագիր	2020թ.	2019թ.	2018թ.
1)	Կազմակերպության միավորների քանակ	2399	4668	4870
2)	Կազմակերպության գործառույթների քանակ	11417	21575	22502
3)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների քանակ	558	1495	1422
4)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների գործառույթների քանակ	3298	8504	8074
5)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների քանակ	489	1439	1333
6)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների փաստացի գնահատված գործառույթների քանակ	2693	6652	7482

4. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների

N	Փաստացի իրականացված աուդիտի կամ խորհրդատվական ծառայության տեսակները	2020թ.	2019թ.	2018թ.
1)	Համակարգի գնահատման աուդիտ	191	544	579
2)	Կատարողականի աուդիտ	32	66	54
3)	Ֆինանսական աուդիտ	171	340	443
4)	Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ	-	-	-
5)	Համապատասխանության կամ իրավական աուդիտ	118	194	202

³ Նշված ցուցանիշը ներառում է ինչպես ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատողներին, այնպես էլ մասնավոր կազմակերպությունների աշխատողներին, ովքեր ընդրկված են եղել ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի աշխատանքներում:

6)	Գնումների աուդիտ, այդ թվում՝ *	263	203	1075
6.1)	Գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝ *	29	112	385
6.1.1)	Գնման ընթացակարգի մասով*	26	60	105
6.1.2)	Պայմանագրի կատարման մասով*	3	52	280
6.2)	Գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝ *	233	71	470
6.2.1)	Գնման ընթացակարգի մասով*	117	36	192
6.2.2)	Պայմանագրի կատարման մասով*	116	35	278
6.3)	Պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների, այդ թվում՝	1	20	220
6.3.1)	Գնման ընթացակարգի մասով	1	10	68
6.3.2)	Պայմանագրի կատարման մասով	0	10	152
7)	Խորհրդատվության մատուցում դեկավարության որևէ մի գործառույթի իրականացման ընթացքում	442	123	66
8)	Օժանդակություն նման գործընթացների իրականացման ընթացքում	12	22	19
9)	Տարբեր բնույթի ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպում և այլն	1	8	1
10)	Այլ, այդ թվում՝	94	85	41
11)	Ընդամենը	1324	1585	2480

* Գնումների աուդիտի քանակը ներառում է աուդիտի այլ տեսակների շրջանակում իրականացված գնումների աուդիտը ևս, որը իր մեջ ներառել է գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող և գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտները, ընդ որում ինչպես գնման ընթացակարգի մասը, այնպես էլ պայմանագրի կատարման մասը:

5. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը

N	Նկարագիր	2020թ.	2019թ.	2018թ.
1)	Տարեկան ծրագրով պլանավորված առաջադրանքների քանակ, այդ թվում՝	681	1518	2680

1.1)	աուդիտորական առաջադրանքների քանակ	637	1511	2677
1.2)	խորհրդատվական ծառայությունների քանակ	44	7	3
2)	Փաստացի իրականացված առաջադրանքների քանակը, այդ թվում՝	1324	1585	2480
2.1)	Աուդիտորական առաջադրանքների քանակ	869	1429	2394
2.2)	Խորհրդատվական ծառայությունների քանակ	455	156	86

6. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկություններ

N	Նկարագիր	2020թ.	2019թ.	2018թ.
1)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված անհամապատասխանությունների քանակ, այդ թվում՝	2742	6298	8388
1.1)	Օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ	1788	3436	4066
1.2)	Կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմանների (պայմանագրեր, գերատեսչական նորմատիվային ակտեր և այլն) նկատմամբ	954	2862	4322
2)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված առաջարկությունների քանակ	2349	4965	5811
3)	Աուդիտորական առաջադրանքների արդյունքում կազմված գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների քանակը, այդ թվում՝	2277	4815	5689
3.1)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում իրականացված միջոցառումների քանակը	1349	3590	4688
3.2)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետի խախտումով իրականացված միջոցառումների քանակը	15	67	39
3.3)	Գործողությունների ծրագրով սահմանված, սակայն չիրականացված միջոցառումների քանակը	128	193	113
3.4)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում գտնվող միջոցառումների քանակը	785	965	849

4)	Առաջադրանքների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների քանակը, այդ թվում՝	2159	6297	8306
4.1)	Իրավապահ մարմիններին փոխանցված	57	152	67
4.2)	Ինքնուրույն կանխված	2102	6145	8239

Լիազոր մարմինն ներկայացվող տարեկան ամփոփ հաշվետվության այլ բաղկացուցիչ

աղյուսակներ

Ներքին աուդիտի համակարգ ներդրած և ներքին աուդիտի իրականացման աշխատանքները մասնավոր կազմակերպության պատվիրակված գյուղական համայնքների

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման (ՆԱՍ) ներքին գնահատումներ

N	Նկարագիր	2020թ.	2019թ.	2018թ.
1)	Տվյալ տարվա աուդիտի առաջադրանքների արդյունավետության գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 1-ի	2.9	2.9	2.9
2)	Աուդիտի առաջադրանքների իրականացման որակի վերաբերյալ աուդիտի ենթարկվող միավորների կողմից տրված գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 2-ի	3.1	2.9	2.8

2. Ներքին աուդիտի միջավայրի միավորները

N	Նկարագիր	2020թ.	2019թ.	2018թ.
1)	Կազմակերպության միավորների քանակ	62	32	73
2)	Կազմակերպության գործառույթների քանակ	820	238	477
3)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների քանակ	56	32	70
4)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների գործառույթների քանակ	370	222	477
5)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների քանակ	57	32	68
6)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների փաստացի գնահատված գործառույթների քանակ	388	222	477

3. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների

N	Փաստացի իրականացված աուդիտի կամ խորհրդատվական ծառայության տեսակները	2020թ.	2019թ.	2018թ.
1)	Համակարգի գնահատման աուդիտ	48	31	68
2)	Կատարողականի աուդիտ	24	-	-
3)	Ֆինանսական աուդիտ	1	1	-
4)	Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ	-	-	-
5)	Համապատասխանության կամ իրավական աուդիտ	21	1	-
6)	Գնումների աուդիտ, այդ թվում՝ *	145	-	-
6.1)	Գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝ *	13	-	-
6.1.1)	Գնման ընթացակարգի մասով*	11	-	-
6.1.2)	Պայմանագրի կատարման մասով*	2	-	-
6.2)	Գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝ *	132	-	-
6.2.1)	Գնման ընթացակարգի մասով*	90	-	-
6.2.2)	Պայմանագրի կատարման մասով*	42	-	-
6.3)	Պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների, այդ թվում՝	-	-	-
6.3.1)	Գնման ընթացակարգի մասով	-	-	-
6.3.2)	Պայմանագրի կատարման մասով	-	-	-
7)	Խորհրդատվության մատուցում դեկլարության որևէ մի գործառնության իրականացման ընթացքում	339	277	891
8)	Օժանդակություն նման գործընթացների իրականացման ընթացքում	-	-	-
9)	Տարբեր բնույթի ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպում և այլն	-	-	-
10)	Այլ, այդ թվում՝	-	-	-
10.1)		-	-	-
11)	Ընդամենը	578	310	887

* Գնումների աուդիտի քանակը ներառում է աուդիտի այլ տեսակների շրջանակում իրականացված գնումների աուդիտը ևս, որը իր մեջ ներառել է գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող և գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտները, ընդ որում ինչպես գնման ընթացակարգի մասը, այնպես էլ պայմանագրի կատարման մասը:

4. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը

N	Նկարագիր	2020թ.	2019թ.	2018թ.
1)	Տարեկան ծրագրով պլանավորված առաջադրանքների քանակ, այդ թվում՝	102	63	141
1.1)	աուդիտորական առաջադրանքների քանակ	62	33	70
1.2)	խորհրդատվական ծառայությունների քանակ	40	30	71
2)	Փաստացի իրականացված առաջադրանքների քանակը, այդ թվում՝	578	310	887
2.1)	Աուդիտորական առաջադրանքների քանակ	239	33	68
2.2)	խորհրդատվական ծառայությունների քանակ	339	277	819

5. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկություններ

N	Նկարագիր	2020թ.	2019թ.	2018թ.
1)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված անհամապատասխանությունների քանակ, այդ թվում՝	605	307	934
1.1)	Օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ	477	256	766
1.2)	Կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմանների (պայմանագրեր, գերատեսչական նորմատիվային ակտեր և այլն) նկատմամբ	128	51	168
2)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված առաջարկությունների քանակ	609	273	934
3)	Աուդիտորական առաջադրանքների արդյունքում կազմված գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների քանակը, այդ թվում՝	588	250	837
3.1)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում իրականացված միջոցառումների քանակը	448	160	669
3.2)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետի խախտումով իրականացված միջոցառումների քանակը	-	-	-
3.3)	Գործողությունների ծրագրով սահմանված, սակայն չիրականացված միջոցառումների քանակը	20	-	4
3.4)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում գտնվող միջոցառումների քանակը	120	90	164

4)	Առաջադրանքների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների քանակը, այդ թվում՝	600	284	837
4.1)	Իրավապահ մարմիններին փոխանցված	-	-	-
4.2)	Ինքնուրույն կանխված	600	284	837

ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՅՐԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ
2. ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմ
3. ՀՀ արտաքին գործերի նախարարություն
4. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
5. ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
6. ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
7. ՀՀ պաշտպանության նախարարություն
8. ՀՀ ֆինանսների նախարարություն
9. ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
10. Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե
11. Պետական եկամուտների կոմիտե
12. Վիճակագրական կոմիտեն
13. Կադաստրի կոմիտե
14. Գիտությունների ազգային ակադեմիա
15. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
16. Հեռուստատեսություն և ռադիոյի հանձնաժողով
17. Հատուկ քննչական ծառայություն
18. Ջրային կոմիտե
19. Կենտրոնական ընտրական հանձնաժողով
20. Մարդու իրավունքների պաշտպան
21. Պետական գույքի կառավարման կոմիտե
22. ՀՀ քննչական կոմիտեն
23. Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողով
24. Քաղաքացիական ավիացիայի կոմիտե

Մարզպետարաններ

25. ՀՀ Լոռու մարզպետարան
26. ՀՀ Սյունիքի մարզպետարան
27. ՀՀ Տավուշի մարզպետարան
28. ՀՀ Շիրակի մարզպետարան
29. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան

ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՅՐԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐ

Քաղաքներ

1. Երևանի քաղաքապետարան
2. Արտաշատի համայնքապետարան
3. Ծաղկաձորի համայնքապետարան
4. Ճամբարակի համայնքապետարան
5. Չարենցավանի համայնքապետարան
6. Եղեգնաձորի համայնքապետարան
7. Եղվարդի համայնքապետարան
8. Գորիսի համայնքապետարան
9. Հրազդանի համայնքապետարան
10. Իջևանի համայնքապետարան
11. Ջերմուկի համայնքապետարան
12. Կապանի համայնքապետարան
13. Մասիսի համայնքապետարան
14. Նոր Հաճնի համայնքապետարան
15. Նոյեմբերյանի համայնքապետարան
16. Սիսիանի համայնքապետարան
17. Թալինի համայնքապետարան
18. Վանաձորի համայնքապետարան
19. Վայքի համայնքապետարան
20. Ալավերդու համայնքապետարան
21. Արարատի համայնքապետարան
22. Սևանի համայնքապետարան
23. Թումանյանի համայնքապետարան

Գյուղեր

1. Առինջի համայնքապետարան
2. Աստղաձորի համայնքապետարան
3. Ավանի համայնքապետարան
4. Ագարակի համայնքապետարան
5. Երզնկյանի համայնքապետարան
6. Մրգաշենի համայնքապետարան
7. Շամիրամի համայնքապետարան
8. Կոշի համայնքապետարան
9. Ուշիի համայնքապետարան
10. Ուջանի համայնքապետարան
11. Լեռնարոտի համայնքապետարան
12. Սասունիկի համայնքապետարան
13. Քանաքեռավանի համայնքապետարան
14. Օշականի համայնքապետարան

15. Ոսկեվազի համայնքապետարան
16. Այրումի համայնքապետարան
17. Բալահովիտի համայնքապետարան
18. Բյուրեղավանի համայնքապետարան
19. Ծովակի համայնքապետարան
20. Ծովինարի համայնքապետարան
21. Ձորագյուղի համայնքապետարան
22. Երանոսի համայնքապետարան
23. Գառնիի համայնքապետարան
24. Գեղահովիտի համայնքապետարան
25. Գեղարդի համայնքապետարան
26. Գետամեջի համայնքապետարան
27. Ջրառատի համայնքապետարան
28. Ջրվեժի համայնքապետարան
29. Լիճքի համայնքապետարան
30. Մայակովսկիի համայնքապետարան
31. Մերձավանի համայնքապետարան
32. Նոր արտամետիի համայնքապետարան
33. Նորատուսի համայնքապետարան
34. Պտղնիի համայնքապետարան
35. Սարուխանի համայնքապետարան
36. Տեղի համայնքապետարան
37. Վաղաշենի համայնքապետարան
38. Վարդաձորի համայնքապետարան
39. Ողջաբերդի համայնքապետարան
40. Հացավանի համայնքապետարան
41. Զուլաքարի համայնքապետարան
42. Այգեկի համայնքապետարան
43. Պեմզաշենի համայնքապետարան